1679) թուին՝ Ս. Յակոբի վանքին մէջ գտնուելով՝ կ'ընդօրինակէ նոյն Աւետարանը «... գրեցաւ Աւետարանս ի քաղաքն Երուսաղէմ ի դուռն Ս. Յակոբայ ի թուականին Հայոց ՌՃԻԸ (= 1679)։ Արդ գրեցաւ... ձեռամբ նորընծայ Տէր Ղազարի եղն.» (Հ. Ակինայ, էջ 91)։

ՂԱԶԱՐ ՔՀ. ԱԿՆՑԻ.— Ս. Յակոբի գրատան Վարք Հարանց գիրքին ետեւ (տպ. ՌՃԿԹ = 1720) կան ինքնագիր երկու յիշատակարաններ, որք են, 1°. «Յիշատակ Հարանց վարքս Ակնեցի Մահտեսի տէր Ղազարին հօրն Մ. Յոհաննին, մօրն Մ. Սառային և կողակցոյն Ազիզին, և որդւոյն տիրացու Առաքելին որ հանգուցեալ է ի սբ ուխտն Մշոյ սբ Կարապետին. եղբարցն Դաւիթին և մեծ պապերուն Ղազարին և Ումէտին որ կոչին ազգաւ Ամիրեանք. որ ետուր յիշատակ վերոյգրեալ տր. Ղազարն ի սբ Երուսաղէմ ի վանքն Հայոց գեղեցիկ տաճարն Սբրբոյ գլխադրին, Յակոբայ Առաքելոյն... գրեցաւ ՌՃՀԹ (=1730) թվին յուլիսի իգ»։ 2°. «արդ յորժամ բարեաւ եկի ի սբ. Երուսաղէմ, թվին ՌՃՁԷ (= 1738)ին. ձեռամբ իմով եղի զսա յիշատակ ի ս. ծնունդն Քրիստոսի. ի ս. յանապատն. զի ընթերցողքն յիշեսցեն զվերոյգրեալսն, և Աստ ողորմի ասասցեն.»

ՂԱԶԱՐ ՔՀ. ԽԱՍԳԵՂՑԻ.— 1692ին Ս. Յակոբի վանքի մատենադարանին կը նուիրէ պատկերազարդ ձեռագիր Աւետարան մը (ՄՁ. Թ. 55), որուն յիշատակարանն է հետեւեալը. «... ստացող սբ աւետարանիս զԽասգեղցի տէր ղազարն և զծնողսն զմտի խաչատուրն և զթանխուռն, և զկողակիցն իւր զՏօլվէթ մհտերէցկինն և զորդիքն զտէր Ստեփաննոսն և զմհտ տիրացու Յարութիւնն, և զհարսն զՆուրի խաթուն և զամ արեան մերձաւորսն. որ ստացաւ զսբ աւետարանս զայս ի հալալ արդեանց իւրոց և ետ յիշատակ ի սբ երսղմ ի դուռն սբ Յակոբայ գլխադրին... եդաւ յիշատակ ի թուականութեանս հայկազեան տումարի ՌՃԽԱ (=1692)...» (Խապ. Ցուց. տետր Ե. էջ 357-358)։

ՂԱԶԱՐ ՔՀ. ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ.— 1792ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։

ՂԱԶԱՐ ՔՀ. ՍՏԱՄՊՈԼՑԻ.— Տաղասաց կամ ընդօրինակիչ Ս. Յակոբի մէջ։ 1695 թուական ձեռագիր տաղարանի մը մէջ կը գտնուի երգ մը «վասն գնալոյ յեգիպտոս, և տղայութեան